# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Արման Գաբրիելյան Վահանի ԱՁ-ն ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/62 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 2 | Արման Գաբրիելյան Վահանի ԱՁ | Արման Գաբրիելյան Վահանի ԱՁ | Արման Գաբրիելյան Վահանի ԱՁ | ՉԱՓԱԲԱԺԻՆ 2. ՆՍՏԱՐԱՆ-ԲԱԶՄՈՑԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 1. Ընդհանուր նկարագրություն և կոնֆիգուրացիա Գծային, երկարացված կառուցվածքով, հանրային օգտագործման նստարան-բազմոց՝ ամուր հիմքով, որի վրա տեղադրվում են փափուկ, առանձնացվող նստատեղի և թիկնակի բարձիկներ։ Դիզայնը՝ մինիմալիստական, ժամանակակից, ուղիղ երկրաչափական գծերով։ Հիմքի ստորին հատվածում նախատեսված է հատուկ ակոս՝ թաքնված լուսավորության համակարգի համար։ Ընդհանուր արտաքին երկարությունը՝ 4000 մմ։ 2. Չափսեր և էրգոնոմիկա Ընդհանուր խորությունը՝ 650 մմ։ Ընդհանուր բարձրությունը՝ թիկնակի բարձիկով՝ 750 մմ։ Նստատեղի բարձրությունը հատակից՝ 420 մմ։ 3. |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Նյութեր և կոնստրուկցիա Կոշտ հիմքը պատրաստված է բարձր խտության, խոնավակայուն և դեֆորմացիայի հանդեպ կայուն լամինացված ՄԴՖ-ից՝ 18 մմ հաստությամբ։ Արտաքին մակերեսը բնական կաղնու փայտի հյուսվածքի և գույնի տեսքով է՝ ըստ Պատվիրատուի հետ համաձայնեցված նմուշի։ Կոնստրուկցիան ներսից ամրացված է մետաղական ուժեղացված կողերով՝ հանրային օգտագործման բարձր ծանրաբեռնվածությանը դիմակայելու համար։ Նստատեղի և թիկնակի բարձիկների լցոնումը՝ բարձր խտության ձուլածո պոլիուրեթանային փրփուր։ Նստատեղի բարձիկների խտությունը՝ 35 կգ/մ³, թիկնակի բարձիկներինը՝ 28 կգ/մ³։ Նստատեղի և թիկնակի փրփուրի հաստությունը՝ 100 մմ։ Անկյունների կտրվածքը՝ 45 աստիճան։ Բարձիկները պատված են սինտեպոնի լրացուցիչ շերտով՝ 200 գ/մ² մակերեսային խտությամբ։ 4. Երեսպատման կտոր և դեկորատիվ բարձեր Երեսպատումը՝ բարձր դասի, խիտ, մաշվածության հանդեպ կայուն կահույքի կտոր։ Գույնը՝ ձիթապտղականաչ՝ Պատվիրատուի հետ համաձայնեցված նմուշին համապատասխան։ Մաշվածության դիմացկունությունը՝ 50,000 ցիկլ՝ ըստ Մարտինդեյլի թեստի։ Լրակազմում ներառված են նույն տեսակի կտորից դեկորատիվ բարձեր՝ կրեմագույն և հիմնական ձիթապտղականաչ գույների համադրությամբ։ Դեկորատիվ բարձերի չափսերը՝ 400 × 400 մմ, պատյանները՝ հանվող, կայծակաճարմանդով։ 5. Էլեկտրական բաղադրիչներ և լուսավորություն Հիմքի ստորին հատվածում՝ հատակի երկայնքով, |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | ներկառուցված է էներգախնայող LED ժապավեն՝ տաք դեղին լուսավորությամբ, 3000 K գունային ջերմաստիճանով: Ժապավենը տեղադրված է ալյումինե պրոֆիլի մեջ՝ լուսացրիչ պլաստիկ ծածկով: Սնուցման բլոկը տեղադրված է թաքնված և սպասարկման համար հեշտ հասանելի հատվածում: Ունի պաշտպանություն կարճ միացումներից և լարման տատանումներից: Սնուցման բլոկի պաշտպանության աստիճանը՝ IP20: 6. Այլ պահանջներ և երաշխիք Կոնստրուկցիան չի ներառում բուսականության, ծաղկամանների կամ հողի համար նախատեսված վերին բացվածքներ կամ արկղեր: Թիկնակի հետևի հատվածը հարթ է: Ապրանքն ամբողջովին նոր է: Տեղափոխումը, հավաքումը և էլեկտրական միացումները կատարվում են Մատակարարի կողմից: Արտաքին տեսքը համապատասխանում է չափաբաժին 2-ի կից նմուշ-լուսանկարին: Երաշխիքային ժամկետը՝ 24 ամիս: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ИП Арман Габриелян Ваганович в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԱՆՇՕՑ-ԷԱՃԱՊՁԲ-2026/62 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | наименование производителя | технические характеристики |
| 2 | | | | |